թակցելով մէկը միւսին գրգռեցին արշաւել Խլաթի երկրների վերայ եւ խոստացան միմեանց օգնել։ Ցոյնք ծանր զօրքով շուեց եւ աւերեց Բերկրի՝ եւ Խլաթի գաւառները նոյա շրջակայիւք հանդերձ, կոտորեց մուսլիմներից մեծ բազմութիւն եւ շատերին գերի վարեց. Այս դէպքը բերեց Իւսուֆ ի. Աբի-լ-Սաջի՝ Ատրպատականի կառավարչի՝ սուրհանդակը աջողութեամբ. Աբի-լ-Սաջ (որի հետ միացան բազմաթիւ կամաւորներ) մեծ զօրքով դիմեց Հայաստան, ուր նա հասաւ Ռամազան ամսին, յարձակեցաւ իբն Դիրանիի եւ նորա նիզակակիցների երկրի վերայ, կոտորեց բնակիչներին եւ աւարի առաւ նոցա գոյքը։ Իբն Դիրանի ամրացաւ իւր ամրոցում։ Զօրքը ոգեւորուած կոտորեց Հայերից մեծ բազմութիւն, այնպէս որ՝ ասում են՝ սպանուածների թիւը 100.000 էր. սակայն Աստուած է յայտնի։

Սայիդ ի. Համդան (որին Մուքթադար ամիրապետը նշանակել էր Մոսուլի, Դիար Ռաբիայի եւ յոյն սահմանագլխի վերայ) դիմեց Մալաթիա, ուր էին բազմաթիւ յոյներ, եւս Հայ Մալիհի գունդը, նոցա հետ միասին Բանի ի. Նաֆիս, Մուքթադիրի զօրապետը, որ քրիստոնէութիւն էր ընդունել եւ յունաց հետ (համաձայն) էր։ Երբ նոքա Սայիդի մերձենալու լուրն առան, քաղաքից դուրս ելան, երկիւղ կրելով, թէ մի գուցէ Սայիդ քաղաքի ապստամբ գնդի հետ նոցա դէմ ելնէ եւ թէ բնակիչք կարող են նոցա վերայ յարձակիլ, եւ նոքա կը կորչին. ուստի նոքա թողին քաղաքը, ուր մտաւ Սայիդ եւ դրեց այստեղ մի կառավարիչ։

326 Թ. Ատրպատականին տիրեց Լաշկարի ի. Միրդաս...։ Արշաւելով Հայաստան՝ մինչ երկրի բնակիչք անհոգ էին՝ նա յարձակեցաւ նոցա վերայ, կողոպտեց, աւարի առաւ, գերեց եւ վերադարձաւ

---

[1] Արաբ բնագրի Բեդլէի գրութիւնն հարկաւ սխալ է։